գրողն հայկազն յիշատակարանաց Տաւրիոյ, կը գրուցէ թէ, «Թուի թէ զայս վէմ բերեալ են աստ (Հայք) յԱնուոյ և եղեալ յեկեղեցի ինչ»։ Թուի կը գրուցէ՝ տարակուսելով խաչքարին հնութեան վերայ. վասն զի նոյն միջոցին դեռ ևս իրեն ծանօթ չէին ոչ ԺԳ դարու բազմաթիւ Հայոց գոյութիւնը ի Սուտաղ, և ոչ այլ նորանոր հետազօտութիւնք գիտնոց, Հայոց հին գաղթականութեանց մասին ի Տաւրիա։ Հաւանական է ինչպէս այս քարին, նոյնպէս և այլ շատ քարերու Զ. Պ. Զ և այլն, թուականներով ի Կաֆա փորագրեալ լինելը։

Քանզի նոյն ինքն Բժշկեան վարդապետ, յեցեալ հաւատարիմ յիշատակարանաց վերայ, ինչպէս կոնդակին Գրիգորի ԺԲ քահանայապետին Հռովմայ առ Հայկազունս Տաւրիոյ (1318), որ 13 ամօք առաջ է քան զմեծ գաղթականութիւն բիւրաւորաց ազգիս ի Տաւրիա, կը գրէ. «Զայնու ժամանակաւ (1318), մեծանուն հանդիսացաւ ազգս մեր ոչ միայն ի Ղրիմ, այլ և ի բազում տեղիս», մեք թողլով առ այժմ ազգիս մեծանուն հանդիսանալը ի բազում տեղիս, յոյժ հաւանական կը համարիմք որ ի Ժ դարէ և այսր միշտ հայկազունք բնակել են Տաւրիոյ զանազան քաղաքաց մէջ։